

զի պատմին, Սահակիստոյ անունը
կու յայտնէր, տնազուլի գրերովն, և
կու սկսէր Սրբոհի Մարիամ: յաւան-
նակն, ո՛հ, այն ժանեոր ժամանակն,
մեզի չհասուց այդ կցուրդդ այլ. բայց
անշուշտ չկրցաւ այլ բոլորովին անհետ

աննշան ընել, և թողուց առաջին տը-
նը. զոր և շատ հեղ հիմայ ըստ յար-
մարութեան վայելուչ իմաստիցն՝ եր-
գեմք առաջի Սրբութեան Սրբու-
թեանց:

Սրբուհի Սարիամ, սափոր ոսկի, և տապանակ կտակարանաց,
որ զի վերուստ զհացըն կենաց՝ պարգեւեցեր քաղցեալ բնութեանս
Լ. նա միշտ բարեխօսեա վասն քաւութեան մեղաց մերոց:

Իր քերդող եղբօրը եղերական վախ-
ճանին առեն՝ արդեօք ո՞ղջ էր քերդո-
ղուհի քոյրն, և լսելով սրտահար սըր-
տաբեկ գոյժը՝ քարայրին անկիւնէն
սոսկալով առաջ եկաւ, և անդարման
ցաւուն յետին մխիթարանք առնելով իր
հոգեխօս բամբիւր, վերջին անգամ
անոր ամենէն քաղցր և ամենէն ողբա-
կան ձայները իր սրտին փափկագոյն
զգացմանց հետ՝ հանեց հնչեց, և իբրեւ
այլօրինակ Վերսիլա՝ փոխանակ օրհ-
նելու այն այլանման տիրասպան Յայե-
լին ձեռքերը, նզովեց հերատուկ չարա-
զէն կնոջ աջը, և իբրեւ մայրն Սիսարայ
զրկուած իր սիրելւոյն այցելութենէն,
փոխանակ բարձր ձողերու և գաւա-

զաններու վրայ կանգուն դիտելու՝ գետ-
նամած տեսնելով անոր եպիսկոպոսա-
կան և արքայական վառերը և դրօշնե-
րը, որք և արիւնովը թաթաւած՝ կու
յիշեցընէին նոր և կսկծալի կերպով մը
“զկապուտ երանգոյն գունագոյն նկա-
րուց, նարօտ պէսպէս նկարուց. այն էր
պարանոցին նորա կապուտ”, և հաւա-
չեց իբրեւ հարազատ քոյր անեղբայր,
բայց Սահակիստոյ և Ստեփաննոսի
արժանավայել հառաչանօք. և ապա իր
երկայն սեաւ վարագուրովն՝ քնարն այլ
դէմքն այլ պատելով, ծածկուեցաւ բո-
լորովին մարդկանց տեսութենէն ի
խորսքարայրին... Պատմութիւնն լռէ:

Հ. Ղ. Մ. Ա.

Ովկիանոս:

“Ո՛ր էիր յորժամ փակեցի զծով
ղրամբք, յորժամ ծնաւ յորովայնէ
մօր իւրոյ ելանել: Եղի նմա զմէք ի
հանդերձ, և զմառախուղ նմա ի խան-
ձարուրս: Եղի նմա սահմանս, եղեալ
փականս և դրունս. ասացի, ցայդ վայր
եկեացես՝ և այլ մի անցանիցես, այլ
անդրէն ի քեզ խորտակեացին ալիք
քո՛ւ”:

Տէր, ի՞նչ պատասխան տամ քեզի.
քու խօսքդ կու խռովէ կու շփոթէ
զիս: Ո՛հ, պէտք է որ ես այլ խորտա-
կեմ հոս իմ հպարտութիւնս: Ո՛հ Լ.՝
տուած իմ, մինչդեռ քու ձեռքդ կու տա-

րածէր այն լայն անապատները, և կու
կապկըպէր այն խայտացող ալիքները, ես
ոչինչ էի. միլիոնաւոր օրեր անցեր էին ա-
նոնց վրայէն, և ես գեռ ոչինչ էի: Եւ
հիմա այլ, որ պայծառ արեւը քու և ծո-
վուն առջև կու լուսաւորէ իմ ափշած
աչքերս և իմ դողդղուն քայլերս, հի-
մա այլ ի՞նչ եմ ես: Լ. յս անչափու-
թեանս առջև ի՞նչ եմ ես. աւազի հատ
մը ծովեզերքի աւազին վրայաւելցուած,
և գրեթէ ոչինչ՝ յորմէ ստեղծեցիր
զիս: Եւ թէ որ մոռնար Ովկիանոս այն
սրտառէրը՝ զոր տուիր իրեն օր մը, ի՞նչ
պիտի ըլլայի ես, ի՞նչ պիտի ըլլային քա-
ղաքներ և ժողովուրդք: Պէտք է որ ես
այլ յիշեմ այն խօսքը, որ չըլլայ թէ
մեռնիմ վախէս այն սպառնացող ալիք-
ները տեսնելով:

Ո՛վ ծով, ամէն օր քու ալիքներդ
կու բարձրանան և կու գան զօրաց խոււժ
բերու պէս ետևէ ետև՝ բախելու այն
սահմանը, զոր Մտուած դրաւ, և ետ-
քը ահիւ և պատկառոտ սարսափմամբ
մը՝ յետ կու քաշուին: Այսպէս եւան-
դոն երիւարն կու կենայ անհամբեր,
բայց հլու: Մոր պէս, մինչդեռ փո-
թորկի ձայնէն քաջալերուած կու թա-
ւալին քու ալիքդ, կայծակին որոտումը
իրենց ծոցը առած, կու բարձրանան
ինչուան երկինք փրփրալով, կու բանան
ծովուն յատակը, և ահաւոր մոնչմամբ
նորէն հոն կ'ընկնան: Այն ատեն նաւոր-
դաց սիրտն կու սառի սարսափէն, կու
տատանին գինովի պէս և բոլորովին
խեղբերնին կու կորսնցրնեն: Այս ծայ-
րագոյն վտանգին մէջ կ'աղաղակեն առ
Մտուած, և Մտուած կ'ազատէ զա-
նոնք: Ո՛րրիկն թեթև հովիկ մը կ'ըլ-
լայ, ալիքներն կու լռեն. անոնց լուռ-
թիւնը տեսնելով այն թշուառներն ու-
րախութենէ կու ցառքեն: Մտուած
կ'առաջնորդէ անոնց, իրենց փափաքե-
լի նաւահանգիստը:

Ո՛վ ծով, ինչ գեղեցիկ ես դու, եր-
բոր փայլուն արշալոյսն իր ոսկիէ ցոլ-
մունքը կու խառնէ քու կապուտակիդ
հետ, և երբ առաւօտեան հեզիկ քամի-
ները, խաղալով կու բերեն մեզի քու
ծոցիդ մէջ ծաղկանց կողովի պէս զետե-
ղեալ կղզեացդ անուշահոտութիւննե-
րը: Այն ատեն կու սկսի ձկնորսն ճամ-
բայ ելնելու երգը, և քու կակուղ դոն-
դոլներդ կու շարժեն կամացուկ անոր
նաւակը, նման մանկամարդ մօր մը որ
կու տատանէ իր որդւոյն օրօրոցը: Ինչ
գեղեցիկ ես դու, մինչդեռ արեգակն իր
մանելու միջոց կու բորբոքէ քու ալիք-
ներդ և կու փալիւցրնէ զքեզ, ինչպէս
կէս օրուան երկինքը իր պայծառու-
թեան մէջ: Ինչ գեղեցիկ ես դու, եր-
բոր գիշերը կամացուկ մը կու տարածէ
քու վրայ իր ստուերը. ատեն ատեն
թեթև բոցիկներ կու սահին ալիքնե-
րուդ վրայէն, մինչդեռ երկնից հաստա-
տութիւնը իր վսեմական պատկերը
նկարուած կու տեսնէ քու խորոցդ մէջ:

Երբեմն գիշերը, դու կ'երեւիս ինծի
ընդարձակ սաւանի պէս տարածուած՝
ծոցիդ ծածկած մեռելոց վրայ. ատեն
ատեն լուսինն կու տայ քու երեսացդ
վրայ գերեզմանական վիմաց ողորկու-
թիւն: Ո՛հ, այն ատեն ինչ յիշատակներ
կու ժողովին մտացս մէջ. երբեմն ալիք-
ներդ մարգարէին ձայնովը բաժնուած
կու կանգնին հսկայակերպ պարիսպնե-
րու պէս, և փրփրալով կ'ինկնան կու
ծածկեն ամբողջ ժողովուրդ մը. — եր-
բեմն մեծամեծ նաւեր դիւրաբեկ եղէգ-
ներու պէս ժայռերուդ դէմ կու ջախջա-
խին. — անյագ ճանապարհորդներ ի-
րենց գանձերովը կ'աներևութանան
հոն. — փառասեր աշխարհակալք հոն
կու կորուսանեն իրենց կարողութիւ-
նը. քու լայն ծոցդ՝ ջարդած կտորնե-
րով կու ծածկի և արեամբ կու ներ-
կուի. — ծնողք, բարեկամք, ամէն
ծովեզերքը կու սպասեն, այլ կու սպա-
սեն անօգուտ: Այդ ալեաց և հողմոց
խուլ խոխոջիւնն, այդ ընդարձակ գե-
րեզմանէն ելած ողբալի ձայն մը չէր:

Իայց ինչո՞ւ համար իմ միտքս այն
ահաւոր յիշատակներուն կ'երթայ: Ին-
չո՞ւ յիշեմ այդ քու մոլեգնութեանդ
զոհները, և շատ անգամ մարդկանց
մոլեգնութեան, ագահութեան, և
խենդութեանը: Ի՞նչի կու սիրեմ քու
բարիքներդ յիշել: Դու չե՞ս որ լու-
սաւոր դրօշից և առագաստից նման կու
բարձրացնես օդուն մէջ այն թեթև կո-
հակները, որ կերպ կերպ ձև կ'առնուն,
և հաճոյական կամ ահաւոր կամ այ-
լանդակ, մեր աչքերը զմայլեցնելու
համար, և ետքը միանալով կու ծած-
կեն երկինքը և կու թափեն քու ջրե-
րովդ՝ առատութիւն և ուրախութիւն
երկրի: Դու չե՞ս որ ամէն հեռաւորու-
թիւնները կու մօտեցնես թոյլ տալով
նաւերուն՝ որ սահին երթան հովերու
երագութեամբ: Ի՞նչով բոլոր ցա-
մաք երկիրներ մէկմէկու ձեռք կու տան,
փոխանակելու իրենց բերքը և հարս-
տութիւնները: Դուն իսկ դուն՝ չունիս
ծոցիդ մէջ զարմանալի գանձեր. դու
չե՞ս անուցիւ ժողովուրդոց, որոնց՝ երկիր

իբրե խորթ մայր չի տար կենաց աս-
րուստը. — դու չե՞ս դարձեալ առատ
բարեկամ այն ազգաց՝ որոնք աւելի եր-
ջանիկ ափունք կու բնակին. ինչպիսի
պարէն և գանձեր կու դիզեն անոնք
քու արգասաւոր ծոցէդ: Ետ անգամ
աներկիւղ մարդիկ կ'ընկղմին քու ա-
լեացդ մէջ, և վեր չեն ելներ ինչուան որ
չի գտնեն ան զարմանալի քարերը, որոնց
փայլունքն կու զարմացընէ արեգական
լոյսը և թագաւորաց ճակատը կու զար-
դարէ:

Չեմ ուզեր քու բնակչացդ վրայ
խօսիլ. անթիւ են անոնք, երկրիս վրայ
ու օդուն մէջ եղող շնչաւորաց պէս՝
կու քարոզեն անոր կարողութիւնը և
իմաստութիւնը, որ ամէն բան ստեղ-
ծեց: Եւ այց ի՞նչ պէս թողում լուծեամբ
անոնց թագաւորը, և իսթանը. ջուրն
գետի պէս կու մտնէ անոր բերանը.
աչքերն բոցի պէս կու ցոլան, երկաթն
իրեն համար ջրային եղէգ մ'է, պղին-
ձըն՝ փտտած փայտ մը: Ետէն չի փախ-
չիր, քարերը թեթեւ տերեւներու պէս
կ'ընկնան վրան. կ'արհամարհէ մուրճը
իբրե չոր յարդ մը, կու ծիծաղի անոր
վրայ՝ որ իրեն տէգ ու նիզակ կու նետէ.
անցած տեղէն լոյսն կու շողայ, ան-
դունդք կու ճերմկնան իր առջև. չկայ
ոյժ մը՝ որ համեմատի իրենին: Եւ անց
վախի ամէն բան կու տեսնէ իր ներքեւը
և ինքն է թագաւոր ուղկիանու ամենայն
գոռոզ որդւոցը:

Ո՛վ Լստուած, քու արարածոցդ
վրայ մտածելով առանց քեզ հասնելու
կու մնորիմ: Սակայն դուն միայն եղիր
նիւթ իմ զարմացմանս և իմ օրհնու-
թեանս. միայն նպատակ իմ փափագա-
նացս և իմ յուսոյս: Եւս ալեացս մէջ
փնտռածս է՝ իմ սրտիս խռովութիւնը՝
երբ քեզմէ հեռու է: Տեսած եմ լեռ-
ներ՝ որ իբրե հառաչանք ըղձից երկրի՝
կու սլանան դէպ 'ի յերկինք. հեղեղ-
ներ և գետեր՝ որ գանգատ թողուն
իրենց եզերացը վրայ. և Ուկիանոսը՝
որ անհանգիստ կու տատանի շարունակ
ծփումք. այնպէս իմ սիրտս այլ կու
բարձրանայ, կու հեծէ ու կու շարժի:
Եւ քեմ գտնել այն ալեաց մէջ քու
անբաւութեանդ պատկերը, յաւիտե-
նական ուկիանու պատկերը, առ որ կու
դիմեն ամենայն արարածք, որուն ես
այլ կու հառաչեմ բոլոր եռանդեամբ:
Ուկիան երկնից, ուկիան խաղաղու-
թեան, լուսոյ, սիրոյ. ուկիան փառաց,
պատուոյ և անմահութեան, թող որ
իմ մտածմունքս շատ անգամ ծփին
քու ալեացդ վրայ, ինչուան որ հոգիս
իրապէս ընկղմի անոր մէջ, միշտ ծա-
րաւի և միշտ արբած, միշտ անյագ և
միշտ յագեալ. իմ սիրտս ունի անանկ
անդունդներ՝ ուր ամէն մարդկային եր-
ջանկութիւնք կու կորսուին. քեզի հա-
մար ստեղծուած են այն անդունդքն,
և քու անչափութիւնդ միայն կրնայ
զանոնք ընուլ ծածկել:

Նոր Քնար

Անրևիկեր

Վայրի հաւուկ մի բըռնած

Ու բերած զըրած զինքն ի նեղ զընտան.

Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց:

Ու ըրտաբեկեալ եմ միջակոտոր,

Ճար չունիմ, ինչ լինամ գերիս.

Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց: